ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1

ք. Երևան «10» «Հոկտեմբերի» **2022թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակարար Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԶԱ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ **Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և տրամադրման աշխատանքների (բակերի և թեք տանիքների)** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **760000** (յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **15** (տասնհինգ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,18** (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ ա տ ա ր ո ղ**
Երևանի քաղաքապետարան	«ԷԼԶԱ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ք. Եղվարդ, Արայի 2-րդ փ., տուն 66
Կենտրոնական գանձապետարան	«Հայէկոնոմբանկ»ԲԲԸ Նաիրի մ/ճ
ՀՀ 900022600325	ՀՀ 163228139198
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 03555008
Ի. Օսիպյան---------- (ստորագրություն) Կ.Տ.	Ս. Հովսեփյան---------- (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 10 » «Հոկտեմբերի» 2022 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/901	Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքների համար առաջադրվում է. Արցախի 10Վ և 10Գ շենքերին հարակից տարածքում կառուցել մինի ֆուտբոլի դաշտ: 1. **Կազմել տեխնիկական եզրակացություն տարածքի փաստացի իրավիճակի մասին:** **Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.** • Կառուցապատման տարածքի առկա իրավիճակը: • Հարակից տարածքում անցնող գազատարի, էլեկտրալարերի և ջրատար խողովակների առակայության մասին տեղեկատվությունը: • Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը: • Գոյություն ունեցող գրանցված ավտոտնակների և ապամոնտաժման ենթակա ինքնակամ շիննությունների մասին տեղեկատվություն: • Տարածքի արտաքին լուսավորության անցկացման մասին առաջարկություններ:	դրամ	255000	255000	1	Էրեբունի վարչական շրջան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 45-րդ օրացուցային օրը ներառյալ:
		• Տարածքում նախատեսվող նստարանների և աղբամանների տեղադրման մասին առաջարկություններ: • Տարածքում նախատեսվող ճաղավանդակների						

		տեղադրման մասին առաջարկություններ: • Կառուցապատման աշխատանքների ծավալների և օգտագործվող նյութերի մասին տեղեկատվություն: • Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ: 2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել. ա/ Արցախի 10Վ և 10Գ շենքերին հարակից մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության: բ/ Արցախի 10Վ և 10Գ շենքերին հարակից մինի ֆուտբոլի դաշտի աշխատանքների կառուցման թերությունների ակտ՝ նախնական համաձայնության: գ/ Առաջադրանքի համաձայն կազմել Արցախի 10Վ և 10Գ շենքերին հարակից մինի ֆուտբոլի դաշտի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր: դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: ե/Նախագծերը ներկայացնել 5 օրինակից: 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն: 2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով: 3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: 4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: 5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով: Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի հետ:						

		Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:						
3	71241200/906	Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքների համար առաջադրվում է. Աթոյան անցուղի հ.12 շենքին հարակից մինի ֆուտբոլի դաշտի կառուցում: **1. Կազմել տեխնիկական եզրակացություն տարածքի փաստացի իրավիճակի մասին: Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.**• Կառուցապատման տարածքի առկա իրավիճակը:• Հարակից տարածքում անցնող գազատարի, էլեկտրալարերի և ջրատար խողովակների առակայության մասին տեղեկատվությունը:• Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:• Գոյություն ունեցող գրանցված ավտոտնակների և ապամոնտաժման ենթակա ինքնակամ շիննությունների մասին տեղեկատվություն:• Տարածքի արտաքին լուսավորության անցկացման մասին առաջարկություններ:• Տարածքում նախատեսվող նստարանների և աղբամանների տեղադրման մասին առաջարկություններ: • Տարածքում նախատեսվող ճաղավանդակների տեղադրման մասին առաջարկություններ:• Կառուցապատման աշխատանքների ծավալների և օգտագործվող նյութերի մասին տեղեկատվություն:• Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ: **2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել՝** ա/ Աթոյան անցուղի հ.12 շենքին հարակից մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության:	295000	295000	1	Էրեբունի վարչական շրջան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 45-րդ օրացուցային օրը ներառյալ:
		բ/ Աթոյան անցուղի հ.12 շենքին հարակից մինի ֆուտբոլի դաշտի աշխատանքների կառուցման թերությունների ակտ՝ նախնական համաձայնության: գ/ Առաջադրանքի համաձայն կազմել Աթոյան անցուղի հ.12 շենքին հարակից մինի ֆուտբոլի						

		դաշտի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր: դ/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: ե/Նախագծերը ներկայացնել 5 օրինակից: 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն 2. Շինարարական հրապարակը կազմակերպել համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. №405Ն որոշման սահմանված պայմաններով: 3. Նախագծերը ներկայացնել 5 օրինակից, 4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ 5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով 6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով: Նախագծա–նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի հետ: Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:						
4	71241200/907	Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքների համար առաջադրվում է. Նոր Արեշ 42-րդ փողոցի մինի ֆուտբոլի դաշտի կառուցում: **1.Կազմել տեխնիկական եզրակացություն բակային տարածքի փաստացի իրավիճակի մասին:** **Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.** • Կառուցապատման տարածքի առկա իրավիճակը: • Հարակից տարածքում անցնող գազատարի,		210000	210000	1	Էրեբունի վարչական շրջան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 45-րդ օրացուցային օրը ներառյալ:
		էլեկտրալարերի և ջրատար խողովակների առակայության մասին տեղեկատվությունը: • Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:						

		• Գոյություն ունեցող գրանցված ավտոտնակների և ապամոնտաժման ենթակա ինքնակամ շիննությունների մասին տեղեկատվություն: • Տարածքի արտաքին լուսավորության անցկացման մասին առաջարկություններ: • Տարածքում նախատեսվող նստարանների և աղբամանների տեղադրման մասին առաջարկություններ: • Տարածքում նախատեսվող ճաղավանդակների տեղադրման մասին առաջարկություններ:						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022600325
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«ԷԼԶԱ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ
ք. Եղվարդ, Արայի 2-րդ փ., տուն 66
«Հայէկոնոմբանկ»ԲԲԸ Նաիրի մ/ճ
ՀՀ 163228139198
ՀՎՀՀ 03555008

Ս. Հովսեփյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 10 » «Հոկտեմբերի» 2022 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/901	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում Արցախի 10վ և 10գ (մինի ֆուտ)	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	255000	255000	255000	255000
3	71241200/906	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում Աթոյան անցուղի 12 (մինի ֆուտ)	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	295000	295000	295000	295000
4	71241200/907	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում Նոր-Արեշ 42 (մինի ֆուտ)	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	210000	210000	210000	210000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022600325
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«ԷԼԶԱ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ
ք. Եղվարդ, Արայի 2-րդ փ., տուն 66
«Հայէկոնոմբանկ»ԲԲԸ Նաիրի մ/6
ՀՀ 163228139198
ՀՎՀՀ 03555008

Ս. Հովսեփյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » « » 2022 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » « » 2022 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՆԱԻՐԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Եղվարդ, 2401,
Երևանյան 10ա
Հեռ.՝ +374 224 2-38-56
Տեղեկատու՝ 86-86
էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
NAIRI BRANCH
Erevanyan str. 10a 2401 Eghvard,
Republic of Armenia
Tel.: +374 224 2-38-56
Call Center: +374 8000-8686
E-mail.: bank@aeb.am
www.aeb.am

16322-37/107

10.10.2022թ.

ԵՐԱՇԽԻՔ N Ե-22/22/0017

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԷԼԶԱ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N **ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ **որակավորման** ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **152.400(մեկ հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ,(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900022600325** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N **ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1** ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև **23.11.2022**թ. օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ՝ **30.06.2023թ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ _____ **Լաերտ Բաղդասարյան**

ՍԲ պետ՝ _____ Ս. Դանիելյան

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՆԱԻՐԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Եղվարդ, 2401,
Երևանյան 10ա
Հեռ.՝ +374 224 2-38-56
Տեղեկատու՝ 86-86
Էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
NAIRI BRANCH
Erevanyan str. 10a 2401 Eghvard,
Republic of Armenia
Tel.: +374 224 2-38-56
Call Center: +374 8000-8686
E-mail.: bank@aeb.am
www.aeb.am

16322-37/108

10.10.2022թ.

ԵՐԱՇԽԻՔ N Ե-22/22/0018

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ԷԼԶԱ ՓՐՈՋԵԿԹՍ» ՍՊԸ** -ի միջև կնքվելիք N **ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1** պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում :

2. Երաշխիքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **101.600(մեկ հարյուր մեկ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ,(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900022600325** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N **ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1** ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև **23.11.2022**թ. օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ՝ **30.06.2023թ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/55-1** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ _____ Լ.Բաղդասարյան

ՍԲ պետ _____ Ս. Դանիելյան